

Ունինք տպագիր եւ ձեռագիր Յիշատակարաններու մէջ բազմաթիւ ակնարկութիւններ Մովսէս կաթողիկոսի կեանքի այլ եւ այլ շրջաններու նկատմամբ, որոնք կը ծառայեն կռուաններ, ճշդելու ժամանակագրութիւնը: Բացի Յիշատակարաններէ հասած են մեզի Կոնդակներ, Թուղթեր եւ Գանձեր ու Տաղեր, որոնք կա'մ Մովսէս կաթողիկոսէն գրուած են եւ կա'մ կը հային անոր գործունէութեան: Այս եւ նման ուղղակի եւ անուղղակի աղբիւրները պիտի յիշատակուին իրենց տեղերը:

Այս տեղ առանձին շնորհակալութեամբ պիտի յիշեմ Վաւերագիրներու ժողովածոյք մը, զոր կազմած է Արհիապատիւ Տ. Պետրոս արքեպիսկոպոս Գոյունեան, մեղուաջան աշխատասիրութեամբ հաւաքելով Հռոմի Տարածման Հաւատոյ Ս. Ժողովոյն եւ Վապիկանեան Դիւաններէն:

Այս Ժողովածոյքը կը բովանդակէ Հայոց եւ Հռովմայ Եկեղեցիներու յարաբերութեան, ի մէջ այլոց Մովսէս կաթողիկոսին եւ անոր ժամանակին հայոց թուղթեր եւ հաղորդագրութիւններ, որոնք այնպէս օգտակար եղան ինձ լուսաբանելու Մովսէս կաթողիկոսի եւ անոր նախորդներու արտաքին յարաբերութիւնները:

Նոր եւ նորագոյն շրջանի պատմիչներէն յիշենք հոս.